



**Մամուլի աջակցության «ԻՆՏԵՐՆՅՈՒՄ» հասարակական կազմակերպության  
մտահոգությունները և հարցադրումները**

**«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ  
կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ**

Մամուլի աջակցության «ԻՆՏԵՐՆՅՈՒՄ» հասարակական կազմակերպությունը հայտնում է իր խիստ մտահոգությունը «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում (Օրենք) փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի (Նախագիծ) վերաբերյալ: Բացի դա, դժգոհության տեղիք է տալիս ժամանակի սղությունը, որը տրամադրվել է այսչափ կարևոր Նախագծի համար: Նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածով ընձեռնված հնարավորությունը (հանրային քննարկումների իրականացման ժամկետն առնվազն 15 օր է), ներկայացնում ենք միայն այն դրույթների վերաբերյալ հարցադրումները, որոնք առաջ են գալիս ամփոփ վերլուծության արդյունքում:

**Հիշյալ Նախագծի առնչությամբ մեր հարցադրումները հիմնված են հետևյալ փաստարկների վրա**

1. Նախագծի 22-րդ հոդվածում, ի թիվս այլոց, արգելվում է հեռուստառադիոհաղորդումներն օգտագործել «երկպառակտություն սերմանելու» համար: Ձևակերպումը պարզ չէ և տարրնթերցումների տեղիք է տալիս. հնարավոր չէ արդյոք այն կիրառել ի վնաս քաղաքական կուսակցությունների՝ դիտարկելով քաղաքական ընդդիմադիր գործունեությունը որպես երկպառակտություն սերմանող:

Ավելին, Նախագծի 61-րդ հոդվածի համաձայն վերոշարադրյալը հիմք է հանդիսանում Լիցենզիայի դադարեցման համար, որը մեր կարծիքով անթույլատրելի է:

2. Նախագծում նշվում է, որ Թվային հեռարձակման ցանցի ստեղծումը, պահպանումն ու շահագործումն իրականացնող կազմակերպությունը և նրա գործառույթները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ (Հոդված 47): Ելնելով իրավական որոշակիության սկզբունքից, նպատակահարմար չէ արդյոք Նախագծին զուգահեռ ունենալ նաև

Կառավարության որոշման նախագիծը, ապահովելու թե իրավական թե տնտեսական կանխատեսելիությունը:

- Պարզ չէ նաև, թե ինչով է պայմանավորված հեռուստառադիոընկերությունների թվի նման կրճատումը. Նախագծի 47-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքում թվային ցանցի միջոցով հեռարձակում են իրականացնելու ընդամենը 18 հեռուստաընկերություններ, որոնցից 2-ը հանրային (չլիցենզավորվող) և 5-ը վերահեռարձակող: Հարցադրման հիմքում ընկած է նաև այն հանգամանքը, որ եթերի թվայնացումը ողջ աշխարհում ենթադրում է հեռարձակող ընկերությունների թվի աճ և ոչ թե կրկնակի նվազեցում:

Հատկանշական է ԵԽ նախարարների կոմիտեի (2003)9 Հանձնարարականը, որում նշված է այն կարծիքը, որ թվային հեռարձակման համակարգին անցումը չպետք է կիրառվի բազմազանության աստիճանը նվազեցնելու հաշվին<sup>1</sup>:

- Խնդրահարույց է նաև հեռուստաընկերություններին առաջադրված թեմատիկ ուղղվածության սահմանափակումը (Նախագծի 47-րդ հոդված). նպատակահարմար է արդյոք վերջինիս կիրառումը երկրում առկա տնտեսական ճգնաժամի պայմաններում:
- Ի վերջո նշենք, որ ելնելով Նախագծի կարգավորման ոլորտի ռազմավարական կարևորությունից, ինչպես նաև այն հանգամանքից, որ թվային հեռահաղորդակցության ներդրումը՝ որպես ՀՀ և ԵՄ համագործակցության ոլորտ, հատուկ հիշատակվում է Եվրոպական հարևանության ծրագրում, խիստ անհրաժեշտ է դառնում, մեր կարծիքով, տվյալ օրենսդրական բարեփոխման գործում հանրային քննարկումների շարունակությունը և քաղաքացիական հասարակության կողմից վերջինիս կիրառելիության խորը ուսումնասիրությունը: Ավելին, Նախագծի ընդունման համար օրենքով նախատեսված ընթացակարգը՝ այն է ԱԾ ներկայացումը, պետք է հետաձգել, խուսափելու համար ընդունված Օրենքում բազմակի անգամ փոփոխություններ կատարելու «դառը» փորձից:

## ***ՄԱ «Ինտերնյուս» ՀԿ***

14 մայիսի 2010 թ.

ՀՀ, Երևան 0023, Արշակունյաց պող. 3, 3-րդ հարկ, հեռ.՝ +374 10 583620, ֆաքս՝ +374 10 569041,  
էլ-հասցե՝ [www.internews.am](http://www.internews.am), էլ-փոստ՝ [office@internews.am](mailto:office@internews.am)

---

<sup>1</sup>ԵԽ Նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին ուղղված թիվ Rec (2003)9 հանձնարարականը՝ թվային հեռարձակման ժողովրդավարական և սոցիալական մասնակցությունը խթանելու միջոցառումների վերաբերյալ.